ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թվով 30 վերանորոգվող/հիմնանորոգվող դպրոցների համար համակարգիչների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.02.2026 թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան

Ցոլակ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

Բացակայում է՝ Անահիտ Հակոբյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«ԳԵՎՈՐԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՇՈՏԻ» Ա/Ձ
2	«Կոմպասս» ՍՊԸ
3	pupush888

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկը.

Զ/Հ	Զբաղեցրած տեղ	Մասնակիցների անվանումները	Նախահաշվային գին	Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ			Մասնակցի կարգավիճակ
				Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	
1	1	«ԳԵՎՈՐԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՇՈՏԻ» Ա/Ձ	62708500	50856000	10171200	61027200	
1	2	«Կոմպասս» ՍՊԸ	62708500	51486100	10297220	61783320	
1	3	pupush888	62708500	100000000	20000000	120000000*	Մերժված

*Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 10.02.2026թ. ժամը 14:00-ին

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 **«ԳԵՎՈՐԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՇՈՏԻ» Ա/Ձ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.
1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **«ԳԵՎՈՐԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՇՈՏԻ» Ա/Ձ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

7.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել **«Կոմպասս» ՍՊԸ-ի հայտը:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

7.3 **pupush888 մասնակիցը** մերժվել է համակագի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին.

8.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/